

## **ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՉՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆՔՈՒԹԻՒՆԸ**

**ՀԱՅՔ Հաստատութիւնը նպատակահարմար է համարում այսուհետեւ տեղեկագրի միջոցով հրատարակել իր գիտահետազօտական-ծրագրային աշխատանքների արդիւմքներն ու իր տարրեր յանձնախումբերի ուսումնասիրութիւնների եւ տեսակետների բննարկման եզրակացութիւնները։ Տեղեկագրում տեղ են գտնելու նաև ՀԱՅՔ Հաստատութեան հետ գործակցող գիտահետազօտական հաստատութիւնների ու անհատ մասնագէտների աշխատութիւններ։**

**ՀԱՅՔ Հաստատութեան տեղեկագրերի լոյս ընծայումը սկսուած է սոյն թիւով եւ շարունակուելու է պարբերաբար՝ համապատասխան նիւթերի առկայութեան դէպ-ֆում։**

**ՀԱՅՔ Հաստատութեան կոչումն ու նպատակը կայանում է հայ ազգային գոյատեսման եւ զարգացման համար ամենակենսական նշանակութիւն ունեցող գաղափարները, կարիքներն ու խնդիրները ըմբռնելու, վերլուծելու եւ դրա հիման վրայ տարրեր բնագաւառների ազգային ամենաբարենպաստ քաղաքականութիւնները առաջարկելու մէջ։**

**ՀԱՅՔ Հաստատութիւնը, իր սկզբունքի համաձայն, ազգային խնդիրներին մօտենում է գիտական օբեկտիւթեամբ եւ համահայկական շափանիշով ու նեռանկարով եւ բացառակապէս զերծ է որևէ հատուածական շահագրգոռուածութիւնից եւ կամ ազդեցութիւնից։**

**ՀԱՅՔ Հաստատութեան գործունեութեան հիմնական մասը կազմում է՝**

**ա - Հայ ազգային ամենակենսական գաղափարների ու խնդիրների բարձրացման, հստակացման եւ դրանց գործնական լուծման համար գիտահետազօտական ծրագրային աշխատանքների կատարումը, գործակցելով համապատասխան գիտահետազօտական հաստատութիւնների եւ անհատների հետ։**

**բ - Այդ աշխատանքների արդիւնքները հայութեան տարրեր հատուածներին, շրջանակներին ու խաերին մատչելի դարձնելը տարրեր մակարդակներով եւ ձեւերով։**

**ՀԱՅՔ Հաստատութիւնը հիմնադրուած է եւ ղեկավարում է, եւ կամ աջակցութիւն գտնում հայութեան ճակատագրով մտահոգ եւ կենաքի այլազան բնագաւառներում էական փորձառութեամբ, տարբեր վայրերում ապրող անձանց կողմից: Նրանք ՀԱՅՔ Հաստատութեանը օգնում են միայն այն գիտակցութեամբ, որ հայ իրականութեան մէջ նման հաստատութեան գործունեութիւնը, վաղուց ի վեր կենսական անհրաժեշտութիւն է:**

**ՀԱՅՔ Հաստատութիւնը որեւէ ձեւով չի կապուած, չի ազդուած ու առաւել եւս չի ղեկավարում որեւէ քաղաքական, պետական կամ այլ նման կազմակերպութեան կողմից:**

**ՀԱՅՔ Հաստատութիւնը ազգային շահերին հետեւող, գիտահետազոտական ծրագրային բնոյրի գործունեութեամբ, ոչ շահութաբեր, լրիւ անկախ ընկերակցութիւն է:**

## **ՄԵՐ Ա.ԶԳԱՅԻՆ ԿԵՍՆՔԻ ԴՐՈՒԱԳՆԵՐԻՑ ՈՐՈՇ ՀԵՏԵԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանում մի խումբ անձինք աւելի քան երեք տասնամեակ առաջ սկսած բազմաթիւ ուսումնասիրութիւններից ու խորհրդակցութիւններից յետոյ եկան այն եզրակացութեան, որ ազգային խնդիրների վերաբերեալ ազգային շահերի տեսանկինով, պետական մօտեցումով եւ արհեստավարժ մակարդակով գիտահետազոտական-ծրագրային հարատեւ աշխատանքների կազմակերպումը հայութեան համար կենսական անհրաժեշտութիւն է: Այդ ժամանակ, նրանք նպատակադրուեցին Հայաստանի ու ամբողջ հայութեան գոյավիճակի եւ դրա հաւանական փոփոխութիւնների ընթացքը ուսումնասիրելու, հաշուարկելու հիման վրայ ստեղծել ազգային բոլոր բնագավառների ընթացիկ ու հեռագնայ զարգացմանը նպատող ազգային համապարփակ գործնական ծրագրեր եւ մասնաւորապէս ազգային անվտանգութեան ու ինքնավար պետականութեան կառուցման նախապատրաստման ծրագրեր:

1960ական ու 70ական թուերին, շուրջ 17 տարի, այդ ուղղութեամբ Հայաստանում եւ մասմար Մուկուպում ու Խորհրդային Միութեան այլ վայրերում համառ, հետեւողական ուսումնասիրութիւններ, դիտարկումներ, քննարկումներ ու վերլուծութիւններ կատարուեցին եւ դրանց հիման վրայ կարեւոր եզրակացութիւններ առաջացան ու որոշ ծրագրեր ստեղծուեցին: Սակայն, մի կողմից գործի ծաւալը, բարդութիւնն ու կարեւութիւննը, միւս կողմից Խորհրդային Միութեան քաղաքական պայմաններից բխող ընդհանուր դրու-

թիւնն ու մարդկանց մտայնութիւնը մեծ ու վտանգաւոր դրժուարութիւններ էին հարուցում այդ աշխատանքների շարունակման համար այնպէս, ինչպէս այդ կարելի էր անել մշտական գործող գիտահետազօտական հաստատութիւններում, եւ մանաւանդ կեանքում դրանց արդիւնքների կիրառման համար:

Այնուհետեւ, 1970ական թուականների վերջերից սինչեւ 80ական թուականները, Սփիտքում կատարուած ջանքերը՝ ստեղծելու այդպիսի գիտահետազօտական ծրագրային հաստատութիւն, վերոյիշեալ եւ նման աշխատանքները անհրաժեշտ հետեւողականութեամբ եւ ծաւալով կատարելու համար, հիմնական արդիւնք չտուեցին գլխաւորապէս երկու պատճառով:

Առաջին՝ Սփիտքի նոյնիսկ ամենազարգացած շրջանակների համար անսովոր էր նման նպատակի համար ժամանակ եւ մանաւանդ հարկ եղած նիրական միջոցները տրամադրելը:

Երկրորդ՝ Սփիտքում թիշ մարդ կար այն ժամանակ, որ ընդունում էր, թէ Հայաստանում (Խորհրդային Սփիտքը ընդհանրապէս հաշորի չէր առնում) լուրջ խնդիրներ կան, որ հայութիւնը նահանջում է, հետ է մնում ընդհանուր զարգացման ընթացքից, կորուստներ է տալիս եւ կարող է դեռ շատ աւելի դժուար ու վտանգաւոր դրութեան մէջ ընկնել, եւ շատ աւելի թիշ մարդ կար, որ ընդունում էր, թէ Սփիտքը, հակառակ Խորհրդային Հայաստանի ղեկավարների կոչերին, պարտաւոր է եւ պէտք է վերագնահատէ իր դիրքորոշումը, վերակազմակերպուի եւ վճռականորէն գործի՝ ազգային իմաստով օգնելու համար Հայաստանին ու Խորհրդային Սփիտքին հոգեպէս, բարոյապէս, քաղաքականապէս եւ մանաւանդ նախապատրաստուելու, որպէսզի

կարողանան յաջողութեամբ դիմագրաւել անխուսափելի փոփոխութիւնները եւ առանձագոյնս օգտուեն դրանցից: Փաստ այն է, որ այդ ժամանակաընթացքում հնարաւոր չեղաւ Սփիտքում ընդհանրապէս գտնել մարդկանց, որ հաւատացին, թէ Սփիտքը ի վիճակի է վերոյիշեալ օգնութիւնը ցուցաբերել Հայաստանին և պատկերացնելին, թէ ինչպէս կարելի է այդ անել: Նոյնիսկ կարելի չեղաւ դա անկեղծօրէն հասկանալ ցանկացողներ գտնել անգամ:

Այսպէս հասանք 1980ական թուականների վերջը, երբ հայութեան ու Հայաստանի համար առկայ վտանգաւոր դրութիւնը, գոնէ որոշ շափով բացայատուեց գրեթէ բոլորին: Ստեղծուեց մի իրավիճակ, մի կացութիւն, որ վերջին երկու տարիների ընթացքում ազգի կրած մարդկացին, տարածքային, դիրքային եւ այլ կորուստները կարող են միայն սկիզբը հանդիսանալ աւելի մեծ տարողութեամբ դրանց կրկնութեան: Այս հանգրուանում, հայ ազգի ու հայրենիքի դիմագրաւած ներքին ու արտաքին մարտահրաւերները, թէ դրական եւ թէ բացասական հետեւանքներով լի, դարձել են աւելի բազմակողմանի, բազմաբնոյթ, բարդ ու ճակատագրականորէն կարեւոր: Եւ հայութիւնը ակնյայտօրէն դարձեալ (բանիերորդ անգամ իր նորագոյն պատմութեան ընթացքում) պատրաստ չէ դիմագրաւելու դրանք, ոչ մտայնութեամբ, ոչ հոգեբանօրէն ու բարոյապէս, ոչ եւ նիրապէս եւ կազմակերպօրէն: Այս պայմաններում, հայութեան մէջ յատկապէս զգալի դարձաւ նաև գիտական մօտեցումով ու ազգային պետական չափանիշով համապատասխան վերլուծութիւնների, հաշուարկների եւ ծրագրերի պական ու դրա հետեւանքները:

\* \* \* \* \*

Ահագանգը, կամ բանաստեղծի ասած զանգակատունը պէտք է հնչեցնել նախ մեր սրտերի եւ մտքերի մէջ, այսօր, երբ դեր ժամանակ եւ միջոցներ կան, այլ ոչ թէ ազգի ոչնչացումից ու երկրի կորուստից յետոյ:

Ըստ մեր կանխատեսումների ու նախնական հաշուարկների, Հայաստանը եւ դրանից դուրս Խորհրդային Միութեան որոշ շրջանում ապրող հայութիւնը կարող է նոյն սպառնալի եւ վտանգաւոր դրույթեան մէջ գտնուել, ինչպէս եղել էր Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ եւ դրանից անմիջապէս յետոյ: Սակայն միաժամանակ, եթէ հայութիւնը այսօր որոշակի փոփոխութիւններ կատարելով իր ընթրուումների եւ վերաբերմունքի մէջ, նոր որակով գործադրի իր շաճքերը եւ օգտագործի իր հնարաւորութիւնները, կարողութիւններն ու պոտենցիալը, ի վիճակի կը լինի ոչ միայն կանխել իր նկատմամբ ճակատագրական արհաւիրքի հաւանականութիւնը՝ Խորհրդային Միութիւնում, նրա շրջակայ երկրներու ու մասամբ նաև միջազգային բեմում տեղի ունեցող փոփոխութիւնների հետեւանքով, այլև նպաստառը պայմաններ ստեղծել իր համար ամրապնդելու իր դիրքերը ու հաստատելու, պահպանելու եւ զարգացնելու իր ազգային պետականութիւնը: Հետեւապէս, այս ընթրուումով, հայութիւնը պէտք է անհապաղօրէն բնորոշի այդ փոփոխութիւնները, շաճքերը եւ համապատասխանօրէն գործադրի դրանք: Ըստ երեսյթին, հայութեան մինչեւ այժմ կատարած շաճքերը անբարար են թէ քանակական եւ թէ մանաւանդ որակական առունով: Դեռ աւելին, այդ շաճքերը յաճախ այնպիսի ուղղութիւններով, ձեւերով ու մակարդակով են կատարուում, որ վնասում են իր իսկ ազգային կենսական շահերին, աւելի մեծացնելով ու արագացնելով վերը նշուած օրհասական վտանգը: Այս պայմաններում ազգային վերոյիշեալ եւ

նման պահանջների ըմբռնման եւ բաւարարման լայն ու խորը ընդգրկումը, այլ աշխատանքների հետ, պահանջում է նաև գիտահետազօտական ու ծրագրային համապատասխան աշխատանքների անհապաղ սկիզբ եւ հետեւողական շարունակութիւն՝ ընդ միշտ, քանի ազգը գոյութիւն ունի եւ ցանկանում է գոյութիւն ունենալ:

\* \* \* \*

**ՀԱՅՔ Հաստատութիւնը՝ Ելեկով վերը նշուած պայմաններից եւ այն հանգամանքից,** որ ժամանակի գործօնը այժմ աւելի վճռական նշանակութիւն է ստացած քան երբեւէ, իր գերագոյն շանքերը ներդնելով հանդերձ ազգային կենսական նշանակութեամբ որոշակի խնդիրների վերաբերեալ արհեստավարժ մակարդակով գիտահետազօտական-ծրագրային մշտական աշխատանքների անհապաղ ծաւալման համար, ներկայ հանգրուանում իր կարելիութիւնները հիմնականում կենտրոնացնում է համապատասխան յանձնախմբերի սեմինարային խորհրդակցական աշխատանքների վրայ այն նկատառունով, որ դա հնարաւորութիւն կը տայ համեմատաբար աւելի արագ, գեր որոշ չափով, լրացնել վերոյիշեալ պակասը, բաւարարել կենսական կարիքը:

## **ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ, ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԻ ԱՆՀԱՌԱԾԵՑԸՆԻԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Որեւէ ազգի առաջնային, հիմնական խնդիրն է պաշտպանել իր գոյութիւնը: Կազմակերպուած ազգը այդ խընդիրը իրագործում է իր գերագոյն շանհերի ներդրումով, համախառախան բաղաքանութեամբ եւ այն ամենաարդիւնաւետօրէն կիրառելու ընդունակ դեկավարութեամբ: Ազգի գոյութիւնը, այլապէս ասած՝ ազգային կենսական շահերի պաշտպանութիւնը, նախ եւ առաջ, նշանակում է ազգի ֆիզիկական անվտանգութեան, մարդկային հիմնական ազատութիւնների, երկրի տարածքային ամրողականութեան, ինքնիշխանութեան, կամ անկախութեան եւ ընդհանուր տնտեսութեան կենսունակութեան ապահովումը, որոնց վրայ հիմնուելով կարելի է ստեղծել ժողովրդի համեմատարար բարձր կենսամակարդակ եւ հոգեւոր ու նիւթական արժեքներ:

Այս գերագոյն խնդիրի կենսագործումը, որն օրինաչափորէն անհրաժեշտ է բոլոր ազգերի, հետեւապէս եւ հայութեան բնականոն գոյապահպանման համար, կախուած է ազգի՝ հիմնականում հոգերարոյական, կրթական եւ մշակութային մակարդակից, ու ազգային պետական առումով բաղաքական հմտութիւնից, որն արտայայտում է նրա երկրաքաղաքական եւ ներքին ընդհանուր իրավիճակի, կարողութեան ու հնարաւորութիւնների համեմատ, բոլոր բնագաւառներն ընդգրկող պետական բաղաքական դոկտրինի առկայութեամբ եւ այն ամենաարդիւնաւետօրէն կիրառելու ընդունակ դեկավարու-

### **թեամբ:**

Հայութիւնը դարերից ի վեր չի ունեցել ազգային պետական բաղաքականութիւն (1918ին սկսածը չշարունակուեց), որը մեր կարծիքով, կարող էր ունենալ: Հայութեան բաղաքականութիւնը եղել է հատուածական, խաւային, կուսակցական, իսկ վերջին եօթանասուն տարիներին, մինչ ազատ Սփիւրքում շարունակում էր այդպիսի բաղաքականութիւնը, հայութեան մօտ երկու երրորդը՝ Հայաստանում եւ Խորհրդային Սփիւրքում ընդհանրապէս որեւէ տեսակի ազգային բաղաքականութիւն չունէր: Այս հանգամանքը, այլ երեւոյթների հետ մեկտեղ, ցոյց է տալիս նաև, որ հայութիւնը գուրկ է եղել ազգային պետական բաղաքականութեան թէ մշակման եւ թէ կիրառման մասնագիտական կառոյցներից: Աւելին, խորհրդային բոնատիրութեան պայմաններում ապրած մի բանի հայ սերունդներ ընդհանրապէս գուրկ են եղել նաև առարկայական, բարոզութիւնից գուրկ միջազգային բաղաքականութեան թէ՝ ուսուցումից եւ թէ՝ փորձառութիւնից:

Այս պայմաններում, ըստ երեւոյթին, հայ, մասնաւորապէս խորհրդահայ մտաւորականութիւնը եւ կամ գոնէ նրա գիտական միտքը, ընդհանուր առմամբ չզգաց անհրաժեշտութիւնը, կամ ուղղակի չկարողացաւ շրջանցելով կամ յաղթահարելով Խորհրդային Միութիւնում ահաւոր փտանգներով լի բազմապիսի դժուարութիւնները, սաեղծել հայ ազգային պետական բաղաքական ընդհատակեայ կամ պարզապէս անպաշտօնական դպրոցը եւ ազգային պետական բաղաքական, տնտեսական, կրթական, գիտական, մշակութային եւ այլ բնագաւառների ծրագրերը, որոնք կարելի լիներ գործարկել մասամբ՝

տուեալ սահմանափակման պայմաններում եւ լրիւ՝ առաջին խսկ հնարաւորութեան պարագային:

Այն հանգամանքը, որ այդ բոլորը չստեղծուեց, ըստ երեւոյթին, դարձաւ նաև հիմնական պատճառներից մէկը, որ ազգը չկարողացաւ խուսափել վերջին շուրջ հինգ տարիների ընթացքում (առանց հիմնաւորուած քաղաքական ուղղիքի ունենալու) ծրագրերի փնտութներում քաղաքական, տնտեսական եւ այլ բնագաւառներում ունեցած խարխափումներից, թանկարժէք ժամանակի վատնումներից եւ մանաւանդ ամբողջ ազգի վրայ շատ թանգ արժեցող ու անվերականգնելի բուացող կորուստներով սխալներից: Մինչդեռ համապատասխան ծրագրերով ու դրանք իրագործելու պատշաճ նախապատրաստութեամբ, այդ ժամանակարնթացքում կարելի կը լիներ արդիւնաւետ կենսագործումներով աննախընթաց արդիւնքների հասնել:

Ենելով այս դատողութիւններից ու հարցի նման ըմբռոնումից գալիս ենք այն եզրակացութեան, որ Հայաստանը դեռ եւս այսօր էլ չի հասցըլ ունենալ պետական չափանիշով եւ գիտական հիմունքներով մշակուած ազգային քաղաքական դոկտրին, որի վրայ կարելի լինի հենել իր ներքին ու արտաքին տարրեր բնագաւառների քաղաքականութիւնները եւ դրանց իրագործման ծրագրերը:

Այժմ, սակայն, ի տարրերութիւն խորհրդային տիրապետութեան անցնող ժամանակաշրջանին, Հայաստանն ու համայն հայութիւնը՝ ուզի թէ ոչ, պատրաստ է թէ ոչ, արդէն կանգնել է ներքին ու արտաքին այսօրուայ եւ հեռանկարային ազգային պետական գործուն քաղաքականութիւն վարելու հրամայականի առաջ: Այս պատմականօրէն պատասխանառու խնդրում եւ մանաւանդ

այժմ առաջացած նզնաժամային պայմաններում ազգը պէտք է շրջահայեց եւ զգոյշ լինի, որ ամբոխային զգացմունքները, անհատական նախասիրութիւնները, հատուածական շահերը եւ կամ կուսակցական հաշիւները չաղդեն եւ մանաւանդ չըելադրեն ազգային քաղաքական ուղղութիւնները, կեցուածքները կամ գործունէութիւնը, որոնք պէտք է բխեն ելնելով միայն ազգային գերազոյն շահերից:

Համոզուած ենք, որ այսօրուայ համար հայ ազգային գերագոյն շահը՝ ըստ կարեւորութեան հերթականութեան, նշանակում է հայութեան բոլոր հատուածների ֆիզիկական անվտանգութեան, Հայաստանի հանրապետութեան տարածքային ամբողջականութեան, ինքնիշխանութեան եւ տնտեսութեան կենսունակութեան ապահովմամբ՝ ժողովրդի կենսամակարդակի միջազգային միջինից բարձրացումը, հոգեւոր կեանքի, կրութեան, գիտութեան եւ մշակոյթի ծաղկումը եւ դրանց հիման վրայ ազգային իրաւականօրէն անկախ պետականութեան աստիճանական ամրապնդումը:

Համոզուած ենք նաև, որ այս ըմբռոնումով հայութեան ազգային գերագոյն շահի պաշտպանումը պէտք է դառնայ ելակետը ազգային պետական քաղաքական դոկտրինի: Այդ մասին ՀԱՅՔ Հաստատութեան ընկերայինքաղաքական ուսումնասիրութիւնների յանձնախումբը ցանկանում է արտայատել իր տեսակետներն ու եզրակացութիւնները այն ակնկալութեամբ, որ դրանք կարող են նկատի առնուել այդ հարցով գրադուռների կամ հետաքրքրուողների կողմից:

Հայ ազգային իրավիճակն ուրոյն է: Այն նման չէ որեւէ ազգի եւ մասնաւորապէս Հայաստանը շրջապատող ազգե-

րի իրավիճակներին: Հայ ազգի դրութիւնը համառոտ, բայց նշանակալիօրէն կարող է բնորշուել նրա ցրուած, անկազմակերպ, անկառավարելի ներկայով եւ իր երկրի հետքինտէ աւելի անապահով ու միջազգային նանապարհային ուղղակի հաղորդակցութիւնից մեկուսանալու ընթացքնվ:

Հայութեան համար պատմական ներկայ հանգրուանում ազգային գերագոյն շահը լաւագոյնս պաշտպանելու համար մշակուած Հայաստանի ազգային պետական արտաքին ժաղաքական դոկտրինի կիրառումը պէտք է ապահովի՝

1 - Հայաստանի Հանրապետութեան ու նրա բոլոր հարեւանների միջեւ երաշխաւորուած կայուն խաղաղութիւն:

2 - Հայաստանի Հանրապետութեան բազմակողմանի գործուն, փոխադարձ շահաւեսութեամբ յարաբերութիւնների եւ գործակցութեան ստեղծումը կամ շարունակումը աշխարհի հնարաւորին չափով շատ երկրների հետ եւ առաջն հերթին Մոսկուայի (Միութենական, դաշնակցային եւ կամ ուրիշ ինչպիսի կառավարութիւն կամ վարչածուէլ այստեղ լինի) եւ Հայաստանի անմիջական հարեւանների ու նրանց շրջակայ երկիրների հետ:

Մինչեւ այստեղ բերուած տեսակետը, ըստ երեւոյթին, բաժանում է ամբողջ հայութիւնը, կամ առնուազն նրա նեշող մեծամասնութիւնը: Սակայն, դրանից այն կողմ գոյութիւն ունեցող հարցերը կամ լրիւ եւ պաշտամօրէն չեն արծարծուած եւ կամ եթէ արծարծուած են՝ իրենց լրիւ եւ գոհացուցիչ պատասխանները չեն գտած: Բերենք այդ հարցերից մի ժանիսը:

- Ինչպէ՞ս կարելի է իրագործել ազգային պետական դոկտրինի արտաքին ժաղաքական վերոյիշեալ նպատակը,

հարեւան եւ այլ երկրների կողմից ի՞նչ պայմաններ կարող են դրուել դրա համար եւ հայութիւնը ի վիճակի կը լինի՝ կամ կ'ուզենա՞յ բաւարարել այդ պայմանները: Ու եթէ շրաւարարի նախնական կամ հետագայ հաւելեալ պայմանները, ի՞նչ դրութիւն կարող է ստեղծուել դրանից Հայաստանի համար:

- Եթէ Հայաստանի հարեւան երկրներից մեկը, կամ մի քանիսը շահագրգուած չլինեն Հայաստանի հետ խաղաղ գոյակցութեամբ եւ իրենց համար որեւէ հարմանակ Հայաստանի դէմ հակամարտ արարքների դիմեն, օրինակ՝ որոշ ժաղաքական եւ կամ տարածքային զիջումների վերաբերեալ անհիմն եւ վերջնագրային պահանջներ ներկայացնեն, ցամաքային ու օդային ուղիներըն արգելափակեն, սահմանների վրայ ուզմական եւ կամ մաքսային ննջումներ գործադրեն, կամ էլ ուղղակի տարածքային զարումներ կատարելով պատերազմական փաստացի վիճակ ստեղծեն եւ այլն: Այս եւ նման պայմաններում.

ա) Հայութիւնը եւ մանաւանդ Հայաստանը ունի՝ կարողութիւնը միշտ պատրաստ լինելու այդպիսի ծրագրեր կիրառել փորձող երկրներին համոզել, որ իրենց հակամարտ արարքներից ոչ թէ կ'օգտուեն, այլ կը տուժեն եւ հարկ եղած դէպքում գործնականօրէն ապացուցել այդ:

բ) Եթէ Հայաստանը այդ երկրներին իր միջոցներով եւ ուժով ի վիճակի չլինի, չկարողանայ՝ դրական կամ բացասական խթաններով շահագրգուել խաղաղ յարաբերութիւնների մշտական պահպանումը եւ կամ երթևեկութեան ազատ եւ անխափան ուղիների տրամադրումը, կամ էլ չկարողանայ կանգնեցնել նրանց թշնամական

գործուն արարքները, այդ դեպքում Հայաստանը կը կարողանա՞յ արդեօֆ որեւէ կողմի օգնութիւնը ստանալ, այդ անելու համար:

գ) Եթէ Հայաստանը նոյնիսկ որոշակի ժամանակացիք համար ի վիճակի չինի սեփական միջոցներով եւ կամ այլ կողմերի օգնութեամբ շահագրգուելում որ հարկն է իր գոյութեան համար կենսական գործակցութիւն եւ կամ դիմադրել եւ կասեցնել իր դէմուղուած վերոյիշեալ կամ նման տեսակի թշնամական շարունակական արարքները, այդ դեպքում ինչպիսի՞ն կը լինեն դրա հետեւանքները հայութեան եւ մասնաւորապէս Հայաստանի համար:

Եւ մի հարց եւս: Եթէ Խորհրդային Միութիւնում տեղի ունեցող փոփոխութիւնների, Հայաստանի Մոսկուայի նկատմամբ որոշակի ժաղաքականութեան եւ այլ պատճառների հետեւանքով վերանայ Հայաստանի Հանրապետութիւնում այժմ գոյութիւն ունեցող Մոսկուայի ռազմական ներկայութիւնը, ապա հայութիւնն ունի՞ հարկ եղած միջոցները, ուժը եւ հզօրութիւնը լրացնելու համար առաջանալիք ռազմականական դատարկութիւնը (վակուումը) այս կամ այն չափով ամէն կողմերից բնականօրէն առաջանալիք հարանուն ննշումների պայմաններում: Իսկ եթէ ոչ, այդ դեպքում ո՞վ, ո՞վքեր ցանկութիւնն ու կարողութիւնը կունենան լրացնելու ստեղծուած պարապութիւնը: Եւ դարձեալ, եթէ այդ պարապութիւնն ուրիշները լցնեն, ինչպիսի՞ն կը լինեն դրա հետեւանքները՝ հայութեան եւ մասնաւորապէս Հայաստանի համար, անմիջապէս եւ հեռաւոր ապագայում:

Ակնյայտ է, որ այս եւ նման հարցերին Հայաստանը պատրաստ չէ որոշակի եւ բաւարար պատասխաններ

տալու: Մի բան, որը ցոյց է տալիս արտաժին հարաբերութիւններում Հայաստանի թուլութիւնն ու ազգային գերագոյն շահի եւ յատկապէս պաշտպանութեան խցելիութիւնը, մանաւանդ որպէս անկախ պետութիւն հանդէս գալու պարագային: Նոյնիսկ յարաբերաբ աւելի բոյլ ու խոցելի ժան 1918 թուականին: Սակայն, առաջին հարցումին՝ թէ ինչպէս կարելի է իրագործել վերոյիշեալ ազգային պետական դոկտրինի արտաժին ժաղաքական նպատակը, մեր համոզմամբ, պատասխանը պարզ է, ուժով, հզօրութեամբ, պատենցիալով: Արդարեւ, կարեւոր է բայց բաւարար չէ խաղաղութեան ձրգութելը, նոյնիսկ արդար ու ժեզ համար կենսական նըշանակութիւն ունեցող իրաւունքներից հրաժարուելու գնով, նոյնիսկ զգացմունքներդ խեղդելով, ցաւդ զափելով, ամօթդ մոռացութեան տալով: Ոչ մի արժէք չունի, հըգօրութիւն է պէտք: Այն ժամանակ կարելի է ունենալ նաև գործնական բարեկամներ, դաշնակիցներ, պաշտպաններ: Պետութիւնների յարաբերութիւններում խաղաղութեան իսկ ժաղաքականութեան իրագործումը պահանջում է ուժ: Երբեք պէտք չէ կարծել, որ օրինակ՝ Շունեցարիան կամ Շունդիան պատերազմների մէջ չեն ներքաշուել եւ խաղաղութիւն են վայելել միայն նրա համար, որ չէզոք են: Ոչ, դա երկրորդական է: Առաջնային պատճառն այն է, որ նրանք ուժեղ են՝ հոյակապօրէն մարզուած, կազմակերպուած եւ ժամանակակից ամենակատարեալ ու մեծ մասամբ սեփական արտադրութեան գէնիներով սպառագինուած բանակով, աշխարհի ամենաբարձր արդիւնաւէտութեան հասնող տնտեսութեամբ եւ այլն, ու ամենակարեւորը՝ ժաղաքացիական բարձրագոյն յատկանիշներով պարտասնաաչ կազմակերպուած,

աշխատասէր ժողովուրդով: Մի խօսքով՝ հզօր են: Եւ դա է բոլոր հնարաւոր նախայարձակներին համոզել, որ նրանց վրայ յարձակուելուց, նրանց երկիրը գրաւելուց աւելի շատ պիտի վնասուեն, քան թէ օգտուեն: Երկրորդ գործօնն այն է, որ նրանք իրենց շրջակայ երկրների կենսական նկատուող շահերի դէմ ոչ մի պահանջու առաւել եւս ոչ մի սպառնալիք չեն ներկայացնում: Ընդհակառակը, իրենց կեցուածքով, ժաղաքականութեամբ, գործունելութեամբ այնպիսի դրութիւն են ստեղծել, որ բոլոր երկրներն էլ ֆիշ թէ շատ օգուտ ունեն նրանցից, եւ հենց այդ հանգամանքը եւս իրենց համար շահ է ապահովում: Ահա թէ ինչումն է կայանում նրանց խաղաղասէր ժաղաքականութեան յաջողութեան երաշխիքը, որն ապահովում է նրանց անվտանգութիւնը, ինքնիշխանութիւնն ու բարգաւանումը:

Ուրեմն Հայաստանի համար եւս, յատկապէս այսօրուայ եւ տեսանելի ապագայի առումով, իր ստեղծելիք կայուն ու յուսալի հզօրութեան եւ շրջակայ երկիրների նկատմամբ իր որոշակի պահանջներն ու գործադրուող ննշումը նրանց կենսական շահերին սպառնալիք չդարձնելու ժաղաքականութեան համակցումը կարող է ապահովել բոլոր կողմերի համար ընդունելի կայուն խաղաղութիւն եւ փոխադարձ շահաւետութեան հիմունքներով գործակցութիւն, որոնց վրայ միայն կարող է պաշտպանել ազգային գերագոյն շահը:

Իսկ այդ պայմաններում, տարրեր թնագաւառների մէջ խաղաղ մրցակցութիւնում անդադար յաղթելով եւ աւելացնելով երկրի պոտենցիալը, հմտանալով պիտութիւն վարելու ասպարեզում, անպայման ի յայտ են գալիս պատմական պահերը նուիրական իդաերի իրագործման:

Մինչ այդ, մեր համոզմամբ, պատմական ներկայ հանգրուանում հայութեան ազգային գերագոյն շահի պաշտպանութիւնը լաւագոյնս ապահովելու ընդունակ՝ Հայաստանի պիտական արտաժին ժաղաքական (բոլորի հետ խաղաղ եւ փոխադարձ շահաւետութեամբ գոյակցութեան) դոկտրինի յաջող կիրառումը կենսական է ազգի համար: Բայց այդ անելու համար, Հայաստանը պէտք է ապահովի այդ դոկտրինի երկու հենարանները (ա) ուժ, հզօրութիւն եւ պոտենցիալ (բ) բոլոր կողմերի հետ լարուածութեան լրիւ վերացում:

Առաջինը՝ ուժը, հզօրութիւնն ու պոտենցիալը, որ հիմնականում պէտք են ննշումներից ու վերջին հաշուուվ նախայարձակումներից պաշտպանուելու համար, պարտադիրորեն անհրաժեշտ է Հայաստանին յատկապէս իր լրիւ անկախացման դէպքում: Այժմ, Հայաստանը անհրաժեշտ չափով չունի դրանք ոչ անկախութիւն նուանելու, եթէ նոյնիսկ համայն հայութիւնն այդ ցանկանայ, եւ ոչ էլ որեւէ մօտ ժամանակում ակամայ անկախանալու պարագային իր շահերն ու սահմանները պաշտպանելու համար: Սակայն, քանի որ անկախացման հընարաւորութիւնը իրականորեն գոյութիւն ունի եւ միայն ժամանակը յայտնի չէ այս արագ փոփոխութիւնների ժամանակարնեցքում, նշանակում է հայութիւնը արագօրեն պէտք է յատուկ ծրագրով անցնի այդ ուժի, հզօրութեան եւ պոտենցիալի ստեղծմանը: (Այս նիւթը հիմնականում ներառնում է ազգային պիտական ներժին ժաղաքական դոկտրինը եւ պէտք է արծարծուի առանձին):

Իսկ մինչ այդ, մինչեւ դրանք ստեղծելը դրանց բացը լրացնելու, ըստ երեւոյթին, միայն մէկ հնարաւորութիւն

կայ՝ հնարաւորին չափով առաւել հարմարաւէտ պայման-ներ դասաւորելով անհրաժեշտ ժամանակամիջոցի համար մնալ Մոսկովեան արտաքին պաշտպանական հովանոցի տակ լրիւ եւ ներքին պաշտպանական համակարգից օգտուել հնարաւորին չափով շատ՝ պակասը լրացնելով սեփական միջոցներով։ Այս խնդիրը պէտք է կատարել տարբեր միջոցներով ու ձեւերով անկախ նրանից, թէ Մոսկուայի հաշիւներն այդ տեսակէտից ինչպիսի փոփոխութիւնների են ներարկուել կամ ներարկուելու են դեպքերի բերումով իր բաղաքականութեան փոփոխութեամբ։ Սա արդէն հայ ազգային դիւանագիտութեան առաջնային խնդիրը պէտք է լինի։ Հայաստանի ինքնիշխանութեան նուազագոյն զիջումով Հայաստանի պաշտպանութիւնը ապահովել Մոսկուայի առաւելագոյն մասնակցութեամբ։

Նման եզրահանգումը գուցէ շատ ծանր, նաեւ շատ էլ դառն է։ Ինչ օրի ենք հասել, որ այսքանից յետոյ, փոխանակ ժամ առաջ Մոսկուայից հեռանալու, հետք ոչ մի գործ չունենալու, հիմա մենք պէտք է նախաձեռնենք եւ չանանք, որ մօս մնանք նրան։ Այդ անելը իսկապէս որ ծանր է։ Սակայն ազգն ու հայրենիքը տառապանքի, անարգանքի, ոչնչացման ու կորուստի իսկական վտանգի առաջ կանգնած՝ այդ միակ միջոցին չդիմելը, այն էլ արագ, վճռական եւ հարկ եղած բաղաքական եւ դիւանագիտական հմտութեամբ այդ չանելը, աւելի ծանր է։ Գուցէ նաեւ ծանր յանցանք է, անկախ որեւէ պատճառաբանութիւնից։ Մանաւանդ պէտք է նայել աշխարհին՝ ի նէ երկրներ, որոնք ամենադաժան կոհիւներ են մդել միմեանց դէմ, այժմ ի՞նչպիսի յարաբերութիւններ են վարում։ Աշխարհի ամենազարգացած

ու ժողովրդավար երկիրները ինչպիսի օգնութեան ձեռք են մեկնում նոյնիսկ Մոսկուայի նման մի իշխանութեան, երէ իրենց շահը դա է պահանջում։

Այս դեպքում կայ մի դատողութիւն եւս. եօթանասուն տարի եւ դեռ դրանից էլ առաջ Մոսկուայի թարի տակ էինք, որովհետեւ ինքն էր դա կամենում, իր շահն էր այդպէս պահանջում։ Հիմա մի առ ժամանակ էլ կարելի է մեր կամքով մնալ, ոչ թէ թարի տակ, այլ կողքին, որովհետեւ մեր շահն է դա պահանջում, մեր գերագոյն շահը, մե՛ր լինել-չլինելու դրութիւնը։ Միթէ՞ աւելի հեշտ է քո շահերին ու կամքին հակառակ մէկի կառքին կցուած, ծով տառապանքներով, հարիւր հազարաւոր զոհերով եւ նիւթական ու հոգերարոյական արժեքների ահաւոր կորուստներ կրելով եւ հակառակ այդ բոլորին՝ օր ու գիշեր ստիպուած նրան գովերգելով բարշ գալը, քան թէ քո ազգի ու հայրենիքի գերագոյն շահերի համար կամաւորապէս գործակցելը, այն էլ քո՛ հաշիւներից բխող ժամանակամիջոցի համար։ Թուում է, թէ տրամարանական պատասխանը մէկն է։

Հայաստանի պետական արտաքին բաղաքական դոկտրինի յաջող կիուարման համար անհրաժեշտ երկրորդ հենարանը՝ բոլոր կողմերի եւ մասնաւորապէս հարեւան երկրների եւ Մոսկուայի հետ (դարձեալ՝ ինչպիսի իշխանութիւններ էլ այնտեղ լինեն) լարուածութիւնների վերացումը եւ փոխադարձ շահաւետութեան հիման վրայ խաղաղ բազմակողմանի գործակցութիւնը պէտք է կատարուի արագ եւ հեռուն գնացող մի շարք հանգամանքներ զգուշօրէն հաշուի առնելով՝ համապատասխան յայտարարութիւններով, կեցուածքներով եւ դրանց յաջորդող բանակցութիւններով։ Այս հարցերում Սփիւռքի

դիրքորոշումը կարող է ել հաւանաբար պէտք է, առնուազն որոշակի ժամանակամիջոցի համար, որոշ տարրերութիւն ունենայ:

Հայաստանի ազգային պետական արտաքին քաղաքական դոկտրինը, վերոյիշեալ երկու հենարաններից բացի, ազգային գերազոյն շահի աւելի յուսալի պաշտպանման համար պէտք է յատուկ ծրագրով ապահովի նաև հենարանուրին չափով միջազգային եւ միաժամանակ երկկողմանի (յատկապէս Հայաստանի հարեւան երկիրների՝ անմիշական հարեւանների հետ) պայմանագրերի, համաձայնագրերի հիման վրայ երաշխաւորութիւններ անկախ կամ ինքնավար Հայաստանի սահմանների, տարածքային ամրողականութեան ու արտաքին ուղիների ապահովութեան վերաբերեալ:

## ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻԾԱԿ ԵՒ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐ

### ՀԱՄԱՌՈՍ ԱԿՆԱՐԿ

Այս համառոտ ակնարկը թէեւ գրուած է շուրջ ինը տարի առաջ, Տեղեկատուն նպատակահարմար է գտնում այն լոյս ընծայել՝ այն նկատառումով, որ դրա որոշ դրոյթները այսօր էլ կարող են հետաքրքիր ու շահնկան լինել:

Հայ ազգային քաղաքական եւ տնտեսական իրաւիճակը ինքնարտինքեան ամենաբարդերից մէկն է աշխարհում: Իսկ երէ հաշուի առնենք նաև նպատակները, որ ազգը ճգոտում է իրագործել, այսինքն, երէ համարելու լինենք մի կողմից պայմանները, հենարանութիւնները եւ ուժերը, որ ունի եւ կարող է ներդնել ազգը, եւ միւս կողմից՝ նպատակադրման ծաւալը, որը վերջին հաշուով համապատասխան տարածք, դիրք եւ ազգաբնակչութիւն ունեցող կենսունակ ազգային պետականութեան ստեղծումն է՝ Կովկասում եւ Մերձաւոր Արեւելքում տարրեր ուժերի առկայութեան պայմաններում, ապա ակնառու կերպով կուրուագծուի խնդրի կարեւորութիւնը, տարդութիւնը, բարդութիւնը, ինչպէս նաև յոյժ վտանգաւորութիւնը, որ հայութիւնը դրել է իր առաջ:

Խնդրի հենց այս կարեւորութիւնը, բարդութիւնը եւ վտանգաւորութիւնն էլ պայմանաւորում են ազգային

բաղաբականութեան մշակման և ծրագրման գիտական լուրջ եւ հետեւողական մօտեցման անհրաժեշտութիւնը։ Դրան զուգահեռ անհրաժեշտ է նաև ազգային ընդհանուր, Հայաստանի անմիջական շրջապատի և միջազգային իրադրութեան գիտական անընդհատ ուսումնասիրութիւն եւ վերլուծութիւն որոշելու համար ուժերի փոփոխուող յարաբերակցութիւնը ներկայ տեսանելի ու աներեւոյք եւ դեռ գալիք դաժան մրցապայքարում, որի մեջ աստիճանաբար ներգրաւում ենք եւ դեռ, ամենայն հաւանականութեամբ, պիտի խրուենք։ Հարկ է նըշել, որ բացի մշտապէս գոյութիւն ունեցող շրջապատի բնականն ննջումից, մեր նպատակադրումները ինքնաստիճեան մրցակցութեան եւ պայքարի յարաբերութիւններ են ստեղծում ու միշտ պիտի ստեղծեն։ Հետեւաբար, առաջնային անհրաժեշտութիւն է որոշելը, թէ ինչպիսին է մեր եւ մրցակից կողմերի տարրեր բնագաւառներում ուժերի առկայ եւ պոտենցիալ յարաբերակցութիւնը, որը, վերջին հաշուով, վճռելու է պայքարի ելքը։ Եթէ նախնական հաշուարկը պարզի, որ ուժերի յարաբերակցութիւնը ի վեաս մեզ է, ապա մենք ժամանակ կ'ունենանք փոխելու այդ յարաբերակցութիւնը եւ կամ նըշտումներ մտցնելու մեր նպատակադրման մեջ։ Իսկ եթէ պարզուի, որ ուժերի յարաբերակցութիւնը յօգուտ մեզ է, թերեւս մտածենք խնդիրներն աւելացնելու մասին, որպէսզի օգտագործած լինենք մեր ուժային աւելցուկը։ Բացի այդ, հաշուարկման մշտական խնդիր պէտք է լինի նաև ազգային պոտենցիալի անընդհատ աւելացումը եւ կատարելագործումը ծրագրուած համապատասխան միջոցներով եւ ջանքերով։ Բացառուած չէ, որ որոշ սխալներ տեղ կը գտնեն այդ հաշուարկներում։

Դրանք կարելի է նշել ու փոխել գործողութիւնների ընթացքում, դա բացառուած չէ, սակայն այնքան սարսափելի էլ չէ, քանի կայ հիմնական հաշուարկը, այն արած մասնագէտները եւ մանաւանդ այն որդեգրած համապատասխան դեկավարութիւնը։ Սակայն առանց որեւէ հաշուարկի եւ այն հասկացող ու կիրառելու ընդունակ դեկավարութեան՝ նպատակադրուել եւ այդ նպատակի իրագործմանը անցնելը, մեղմ ասած, արհեստավարժ չէ։ Սա զգացական մօտեցում է, անհաշիւ, անտընտեսվար, որի դեպքում եթէ յաջողութիւններ լինեն անգամ, դրանք կը լինեն մասնակի, ժամանակաւոր, եւ վերջնական պարտութիւնը անխուսափելի։ Եւ դա պէտք չէ զարմանալի լինի։ Եթէ նոյնիսկ թուայ, թէ տուեալ ժամանակաբնթացքում որեւէ բաղաբական, թէկուզ եւ յոյժ անհրաժեշտ նախաձենութիւն սկսելու համար պայմանները բարենպաստ են, սակայն մեր եւ մեր շահերի հետ բախուող կողմերի առկայ եւ պոտենցիալ կարողութիւնների չյաշուարկուած յարաբերակցութիւնը, էութեան մեջ ի վեաս մեզ լինի, հակառակորդ կողմը հնարաւորութիւն կ'ունենայ մեր իսկ նախաձենութեան գործընթացքում փոխելու մեզ համար նպատաւոր պայմանները՝ աւելացնելով գործող ուժերը ի հաշիւ իր պոտենցիալի, կամ փոխգիջումների գնալով մեր հակառակորդներից կամ բարեկամներից ումանց հետ եւ ստանալով նրանց աջակցութիւնը։ Այն ժամանակ ի վեաս մեզ կատարուած փոփոխութիւնը աւելի մեծ անակնեկալ կը լինի մեզ համար, քան էր չհաշուարկուած եւ չհիմնաւորուած սկզբնական առաւելութիւնը։ Դա կը լինի, փաստօրէն, հակառակորդի այն խաղաղաբարտը, որը վերջնական յաղթանակ կը բերի նրան ու վերջնական

պարտութիւն մեզ: Պարտութիւն, որ որոշ դեպքերում, կամ մի ժամկ անգամ կրկնուելուց յետոյ կարող է հանգեցնել անվերականգնելի, կործանարար կորուստների: Ցիշենք թէկուզ մէկ օրինակ. Կիպրոսը Ցունաստանին միացնելու՝ յոյների իսկ նախաձեռնութեան շարունակուող հետեւանեները:

Այսպիսով, ազգային ներկայ եւ հեռագնայ բաղաժականութեան հաշուարկումը եւ ծրագրաւորումը հիմնուած շրջապատի ուժերի եւ մեր նկատմամբ նրանց ներկայ ու ապագայ հաւանական դիրքորոշումների, ինչպէս նաև ազգի բոլոր հասուածների բոլոր բնագաւառների առկայ եւ ըստ որոշակի ծրագրերի դեռեւս ստեղծելիք կարողութիւնների ու միջոցների վրայ ոչ շուայլութիւն է եւ ոչ էլ առանձնայատուկ նուանում, այլ ամենակենսական, հրատապ ազգային անհրաժեշտութիւն:

Ո՞վ պէտք է կատարի այդ հաշուարկն ու ծրագրաւորումը: Պատասխանը մէկն է՝ ազգի պատասխանատուն, ազգային իշխանութիւնը: Իսկ նրա բացակայութեան դեպքում ազգային խիդեն ու գիտակցութիւնը կրող, ազգին ծառայելու նկատմամբ հոգեկան պարտգացող, մասնագիտօրէն պատրաստուած հայ մտաւորական խաւը: Եթէ այն չկայ, բոլորովին չկայ, այդ դեպքում մեր դրութիւնը արտակարգօրէն լուրջ է, եւ պէտք է ամէն ինչ անել, որ այն անհապաղ ստեղծուի: Թէ ի՞նչ կերպ կարելի է այդ անել, դա առանձին խօսակցութեան նիւթ է: Իսկ եթէ կայ, թէկուզ մի փոքր մասնիկը, վերոյիշեալ մակարդակի մտաւորական խաւի, այդ դեպքում անմիջապէս այն պէտք է համապատասխանօրէն կազմաւորուի եւ գործի անցնի ամէն:

Այս ծայրայեղ միջոցի՝ կամաւորութեան, մտաւորական աշխարհագօրի, եթէ կ'ուզէք, կարիքը չէր զգացուի, եթէ մեր հայրենիքը՝ Հայաստանը, ունենար ազգային իրական եւ ոչ թէ երեւութական իշխանութիւն: Այդ դեպքում վերոյիշեալ հաշուարկման ու ծրագրաւորմանը կը ձեռնարկէին Հայաստանի կառավարական մարմինները եւ գիտական հիմնարկները, Գիտութիւնների Ակադեմիան իր հագարաւոր գիտաշխատողներով, եւ հանրապետութեան գիտական ծախսերի առիւծի բաժինը չէր յատկացնուի տիեզերական խորութիւնների չափմանն ու աստղային համակարգերի հաշուարկմանը: Այն ժամանակ, երբ այսօրուայ դրութեամբ՝ վրայ հասնող պատմական օրիհասր մերկ ձեռքերով՝ բացարձակապէս առանց նախապատրաստութեան է դիմագրաւելու հայ ազգը: Եւ մի՞թէ հայ գիտնականները ոգին ի բուռ չէին աշխատի հաշուարկելու համար, թէ ինչ հաւանականութիւններ ունենք յաղըող դուրս գալու առաջիկայ բաղաժական, դիւանագիտական, տնտեսական եւ այլ նակատամարտերում, եւ ըստ այնմ ծրագրային տարբերակներ մշակելու ազգային գօրահաւաքի բոլոր բնագաւառների համար, սկըսած կրթական, գիտական, տնտեսական, մշակութային ասպարէզից մինչեւ բաղաժական, դիւանագիտական, ուազմական: Բայց քանի որ Հայաստանի գիտնականները չունեն այդ աշխատանքը կատարելու հնարաւորութիւնը, ապա արտախորհրդային Սփիւրքի պարտքն է՝ ելնելով այս ցաւալի իրականութիւնից, ի սպաս դնելու իր բոլոր հնարաւորութիւնները ազգի համար կենսական խնդրի իրագործմանը: Նախ՝ խնդրի արծարծումը իր ամբողջ ծաւալով, խորութեամբ եւ կարեւորութեամբ, ապա՝ դրա լուծման աշխատանքի կազմակերպու-

մը եւ դեկավարումը: Միշազգային Սփիտքի քաղաքական հասարակական եւ գիտական միտքը, թէկուզ եւ ոչ ամբողջութեամբ, պէտք է հաւատալ, որ համապատասխանում է հայ մտաւորական վերոյիշեալ մակարդակին ու հետեւապէս կարող է եւ պարտաւոր է դա անել ոչ միայն իր համեմատարար մեծ հնարաւորութիւնների բերումով, այլեւ այն պատճառով, որ տասնամեակներ շարունակ իր ձեռքում է պահել Հայ Դատի նուիրական գաղափարների դրօշը: Ինքնին երեւոյթ էր այդ գաղափարների բիւրեղացումը, անշուշտ, բայց դա բաւարար չէ: Տալ գաղափարը, ոգեշնչել ազգը այդ գաղափարների իրականացման պայքարին, առանց հաշուի ու հաշուարկի՝ շատ դէպքերում նոյնիսկ կարող է վնասակար լինել: Ուրեմն, ազգային ներկայ ու հեռագնայ քաղաքականութեան գիտական հաշուարկ եւ ծրագրում՝ իբրեւ քաղաքական եւ գիտական մտքի համապատասխան ներկայացուցիչների անմիշական առաջադրանքը, եւ այդ հաշուարկի ու ծրագրի իրագործման անհրաժեշտութեան գիտակցում, ընդունում եւ իր պայմանների համաձայն մասնակցութիւն իրավանչիւր հայի կողմից: Այս է հայութեան գործնական եւ կենսական խնդիրը այսօր, որը կարող է այս կամ այն կամ այն չափով համազգային տարողութեամբ գործարկուել:

Այս խնդրի իրագործմանը զուգահեռ, ինչպէս նշուեց, հարկաւոր է հայութեան բոլոր հատուածների ընդհանուր իրավիճակի անընդհատ եւ հանգամանալից քննարկում, վերլուծութիւն, որը հնարաւորութիւն կը տայ տեսնելու, թէ որո՞նք են գոյատեւման համար անհրաժեշտ առաջնային նախադրեալները առ այժմ փաստացի, այսինքն այսպէս կոչուած ներազգային պետականութեան

ստեղծման համար, թէ որքանո՞վ առկայ են այդ նախադրեալները մեր իրականութեան մէջ, ի՞նչն է պակաս, ի՞նչպէս եւ ի՞նչով կարելի է լրացնել կամ փոխարինել պակասող օղակները:

Նոյեմբեր 1981

ՎԱՐԴԱՆ ԳՐԻՉԵՆՅ